

ԱՐՄԻՆԵ ԱՐՋՈՒՄԱՆՅԱՆ

Արցախի պետական համալսարան

ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌԻ ՄԻ ՇԱՐՔ ԿԱԶՄԱԽՈՍԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԼԵՉՎԱՄԾԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝ Լեզու և մշակույթ, Ղարաբաղի բարբառ, ճանաչողական լեզվաբանություն, բառիմաստ, լեզվամտածողություն, արտալեզվական իրողություններ, վերաիմաստավորում:

Լեզվի դարձվածապաշարը յուրաքանչյուր ժողովրդի մշակութային և պատմական ժառանգությունն է, և շատ դեպքերում դարձվածի իմացությունը պայմանավորված է լինում տվյալ երկրի մշակույթի ու պատմության հետ ունեցած կապով: Մշակույթ հասկացությունը սահմանվում է որպես հասարակության և մարդու զարգացման որոշակի մակարդակ, որն արտահայտվում է մարդկանց գործունեության և կյանքի կազմակերպման ձևերով: Մշակույթն ընդգրկում է մարդաբանությունը, որով բացատրվում են մի շարք երևույթների առաջացման ու զարգացման ընթացքը, դրանց փոխանցման սոցիալական և քաղաքակրթական հետևանքները¹: Իսկ լեզվի կապը համամարդկային և ազգային մշակույթի հետ անփոփոխ է: Թեև դարձվածները, որպես լեզվական առանձնահատուկ երևույթ, իրենց արմատներով գնում են դարերի խորքը, սակայն բառերի համեմատությամբ, լեզվի զարգացման համեմատաբար ուշ շրջանի արդյունք են՝ կապված մարդու լեզվամտածողության զարգացման ավելի բարձր մակարդակի հետ²: Մարդն ամենաշատ դարձվածներ կազմել է իր մարմնի մասերի ինչպես արտաքին, այնպես էլ ներքին օրգանների անվանումներով՝ վերաիմաստավորելով դրանք և հարաբերելով իր գործունեության տարբեր ոլորտներին: Իրեն շրջապատող երևույթներին կենսականություն հաղորդելու ձգտումով նա դրանց վերագրել է մարդկային հատկանիշներ:

Պատմամշակութային համապատկերը բնորոշ է ամենից առաջ բնիկ

¹ Н. Дж. Смельзер, *Социология*, Москва, 1994, сс. 41-43.

² Խ. Քաղիկյան, «Դարձվածային միավորների ծագումը և նրանց առաջացման աղբյուրները», ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գիտական աշխատություններ, հ. 6, Երևան, 2003, էջ 37:

դարձվածներին, քանի որ հենց դրանք են արտացոլում տվյալ հանրության պատմական իրականությունը, ավանդույթներն ու սովորույթները: Աչքի ընկնելով իրենց պատմական և ճանաչողական արժեքներով դրանք ստեղծվում են ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող այնպիսի իրադարձությունների առիթով, ինչպիսիք են ծնունդը, պսակագրությունը, մահը և այլն:

Այսպես՝ Ղարաբաղի բարբառում **անգուճը կըտրըէլ/ըռնօտէլ** դարձվածը «տղային նշանել» իմաստով է գործածվում: Հարսանիքի մասցուն մորթելու ծիսակարգը տարբեր նկարագրություններով հայտնի է հայկական տարբեր մշակութային շրջաններից: Սովորույթի համաձայն՝ մորթվում էր մատղաշ կենդանի՝ արջառ կամ խոյ: Ամուսնացող երիտասարդը հարսանյաց ծեսի հերոսն էր, որը, ըստ այդ ծեսի, խորհրդանշորեն մեռնում և նորից էր ծնվում³: Նրան փոխարինում էր մորթվող անասունը, և դա համարվում էր մարդկային զոհի փոխարինումը կենդանականով (առկա է նաև հնդեվրոպական այլ էթնոմշակութային ավանդույթներում): Այդ համարժեքությունը երևում է նաև հայերեն **առն բառի** նշանակությունների մեջ՝ «խոյ» և «այր, տղամարդ»⁴: Մորթվող կենդանու՝ զոհի ականջը կտրում, այսինքն՝ նշան էին անում և փեսացուին էլ դիմում էին ամուսնությունն ակնարկող «ականջը կտրել»-ու արտահայտություններով:

Հարսանյաց ծիսական արարողությունների մեկ այլ դրվագ է ամփոփում **խընձձօթըրը մաշկան տօ՛, վէր վէր չընգավ, փըսըկէլի վախտըն ա դարձվածը**: Խնձորն աղջկա, հարսնացուի վրա նետելը նրան հավանելու, յուրային դարձնելու և արգասաբերությամբ օժտելու խորհուրդն ունեթ⁵: Արցախցու պատկերացումներում, աղջկա փարթամ հասունությունը նաև նրա մարմնի բարեմասնության և սերնդաշարունակության երաշխիքն էր համարվում: Այդ փարթամությունը աչքի ընկնող աղջկա վրա նետված խնձորը գետնին չէր ընկնի:

Ղարաբաղի բարբառի **կըլՕխը կապէլ** դարձվածը ևս «ամուսնացնել» է նշանակում՝ պահպանելով իր մեջ հարսանեկան արարողության մի մասնիկը, երբ հարսին հագցնում էին օծված պսակագգեստը և աղջկական գլխաշորը հանելով ամուսնացած կնոջ գլխաշոր էին կապում⁶:

Ընտանիքի և ընտանեկան կենցաղի մասին ավանդված տեղեկությունները

³ **Զ. Խառատյան**, «Ամուսնական գույգի ծիսական համարժեքներ հայոց հարսանիքում», Հանրապետական գիտական նստաշրջան. 1986-1988 թթ. ազգաբանական և բանագիտական դաշտային հետազոտությունների հիմնական արդյունքները, Զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 1990, էջ 27-28:

⁴ **Հ. Անադյան**, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Երևան, 1926, էջ 261:

⁵ **Ռ. Նանապետյան**, Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Երևան, 2004, էջ 156:

⁶ **Ս. Կիսիցյան**, Լեռնային Ղարաբաղի հայերը, Երևան 1981, էջ 47:

վկայում են հայկական եռասերունդ ընտանիքի գոյություն մասին, որը կազմվում էր մի կին, մի ամուսին սկզբունքով, ընդ որում՝ ամուսինը պետք է համարվի կնոջ գլուխը, նրա փառքը և օրենքը⁷: Բարբառի կըլխէն տարը՝ «ամուսին, այր» իմաստով և կըլծձխը կըտըրած՝ «ամուսինը մեռած, այրի» իմաստով դարձվածները այս հարաբերությունների վառ արտահայտությունն են:

Արցախցու հավատքի ուժի խտացումն են կըլխավը մատաղ քիւնիլ, կըլխավը պըտըպատ անէլ/շօռ տալ դարձվածները, որ նրա անմնացորդ նվիրումն են նշանակում ու նաև օրհնանքի զորություն ունեն՝ կըլխէտ մատաղ ինիմ, կըլխավըտ պըտըպատ անիմ: Սրբատեղիներում կատարվող եռաշրջանը շարից պաշտպանելու, շար ուժերին այդ շրջանակի մեջ առնելու խորհուրդն ունեն: Նորապսակ գույգի տուն մտնելու ժամանակ նույնպիսի եռաշրջան էր անում փեսայի մայրը, որով ասես զոհաբերում էր իրեն, ինչպես մատաղի ոչխարը կամ եզն են զոհաբերում: Ժողովրդի մեկնաբանությամբ՝ ծեսի նպատակը ամուսնացողներին միմյանց ամուր կապելը և նրանց հարաբերությունները շար ուժերից պաշտպանելն էր⁸:

Քրիստոնեական բնույթ ունենալով արցախցու հավատքը մնացորդներ ունի նաև հեթանոսական անցյալից, որը երևում է հատկապես հոգու հավատքի, ֆիզիկական երևույթների և բնության առարկաների պաշտամունքում: Կազմախոսական բաղադրիչով մի շարք դարձվածներ թաղման ծեսերից մնացած արտահայտություններ են կամ անեծքներ, որոնցում ևս արտացոլվում են արցախցու կենսակերպի ու մտածողության հնամենի գծերը: Յավն ու ողբերգությունն արտահայտելու հետ մեկտեղ, թաղման ծեսի բուն խնդիրն էր սիրաշահել, գոհացնել հանգուցյալի հոգուն, հմայական գործողություններով վանել շար ուժերին⁹:

Մինչև XX դարի սկիզբը հանգուցյալին հողին հանձնելու նախապատրաստություններից մեկը պատանքելն էր, հատկապես գյուղական վայրերում: Սա նախ կրոնական հիմք ուներ, ըստ որի՝ մարդու մարմինը պետք է մերկ հանձնվեր այն հողին, որից ինքը գոյացել էր, ապա՝ սոցիալական¹⁰, կամ էլ ընկերքի նմանողությամբ խորհրդանշում էր մարդու երկրորդ ծնունդը այլ կյանքի համար¹¹: Պատանքը ձևում էին և բամբակե հաստ թելով կարելով փաթաթում ննջեցյալի մարմնին. երևույթի պատկերացումն էլ մնում է իրը՛սըտ կարիմ անեծք-դարձվածի հիմքում:

⁷ Վ. Բոդյան, Հայ ազգագրություն. համառոտ ուրվագիծ, Երևան, 1974, էջ 119:

⁸ Ս. Լիսիցյան, նշվ. աշխ., էջ 61:

⁹ Ե. Հարությունյան, «Հայ ժողովրդական սգո երգեր», Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 24, Երևան, 2007, էջ 143:

¹⁰ Վ. Բոդյան, Հայ ազգագրություն, էջ 178:

¹¹ Ե. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 156:

Հեթանոսական շրջանից եկող ողբերգական պարերի, մոխրապաշտության մասն էին կազմում մագերը փետելու, գլխին մոխիր թափելու և այլ գործողություններ, որոնք էլ ժառանգություն էին նախնադարյան հասարակությունից¹²: Կանայք պատրաստ էին հրաժարվելու իրենց գեղեցկությունն ու պարծանքը կազմող հյուսերից, իսկ տղամարդիկ կտրում էին մորուքը: Այս դեպքում ամբողջը փոխարինվում է խեղանդամություն շառաջացնող մասով՝ մագով¹³: Կրակապաշտության վաղ շրջանում մարդիկ մոխիրն օգտագործում էին մեռածի մարմինը նեխումից գերծ պահելու համար: Երևույթի խոսքային արտահայտություններն ավելի երկար են պահվում լեզվում, հատկապես բարբառային շերտերում: Տարբեր իմաստներով սա երևում է նաև Ղարաբաղի բարբառում, ինչպես՝ մօխրավ անէլ՝ «վնասագերծել», «քողարկել», մօխըրվիս տու՝ մարդուն մահացած տեսնելու շարակամություն: Ղարաբաղի բարբառում մագէէրը քանդիլ, կըլխէն մօխէր ածէլ դարձվածները դրանց վկայությունն են: Ինքնախարագանման ու ինքնագոհության ձևերից են մարմինը ծվատելու, արյունաշաղախ լինելու գործողությունները, որոնք անձնվիրության ու հավատարմության խորհուրդն ունենին և պահպանվել են **արօն ցըրը՛վ տալ** դարձվածում:

Հանգուցյալի մարմնի խնամքը, սովորության համաձայն, կատարվում էր տախտակի կամ տաշտակի վրա¹⁴, որից էլ ավանդվել է մագէէրտ տըխտակէն սանդրիմ դարձվածը:

Շատ ժողովուրդների նման արցախցու պատկերացումներում էլ արևը կյանքի, ծննդի ու ամենայն բարու խորհրդանիշն է: Օրհնում և երգվում էին նրա արևով, աղոթում նրան: Արևածագին «իմ իրը՛սըս քու վը՛ննանըտ տակը» աղոթքով արևին են մրմնջացել հոգսերն ու բաղձանքները¹⁵: Սա արևի պաշտամունքի վերապրուկ է, որը բանաձևվել է նաև Ղարաբաղի բարբառում:

Սովորական է եղել արշալույսի՝ որպես կույսի ըմբռնումը հայ ժողովրդական հավատքում, արշալույսին պարզապես լույս կամ սուրբ լույս են անվանել¹⁶: Լույսը հայերենում շատ է օգտագործվում «ուրախություն» իմաստով, և հարսանիքի, ծննդաբերության ու այլ առիթներով միմյանց շնորհավորում են աշկըտ լը՛ա, աշկուտ լը՛աօն՛մ կէնա՛ նկատի ունենալով ուրախությունն ու լույսի մաքրությունը:

Ինչպես աշխարհիկ կյանքում, այնպես էլ կրոնական սովորություններում, ըստ ծիսակարգերի իրացվող պատժաձևերի հետքեր են մնացել արցախյան

¹² Վ. Բդոյան, նշվ. աշխ., էջ 174:

¹³ Ե. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 140:

¹⁴ Նույն տեղում, էջ 155:

¹⁵ Ե. Լալայան, *Երկեր*, հ. 2, Երևան, 1988, էջ 173:

¹⁶ Մ. Աբեղյան, *Երկեր*, հ. 7, Երևան, 1975, էջ 38:

կենցաղի ու բանահյուսության մեջ: Վաղեմի ժամանակներում անբարոյական կանանց կամ տղամարդկանց նկատմամբ կիրառվող պատժամիջոցներից մեկի՝ անարգանքի նշան էր համարվում նրանց մազերը կտրելը¹⁷: Այդ սովորության մնացորդ է մազը/ծամը կրտրրած դարձվածը, որը Ղարաբաղի բարբառում ևս վերոնշյալ իմաստն ունի:

Տարբեր հանցագործությունների ու զանցառությունների համար մեղավորներին (օտար կամ յուրախին) պատժի էին ենթարկում, երբեմն նաև հրապարակավ: Ընդունված էր, օրինակ, քիթը շիկացած շամփուրով դաղելը¹⁸: Ժողովրդախոսակցական բառաշերտում էլ պահպանվել է **քրէթը դաղել/թակել** դարձվածը:

Վաղ հեթանոսական ժամանակների սովորությանմբ մեղսագործներին հրապարակավ պատժում էին՝ հագուստը նավթով ողողելով (ծանր հանցագործները պատիժը կրում էին մերկ մարմնով), դեմքը սևացնելով նավթի թանձր մածուկով¹⁹: Այդ սովորությունից են եկել սրվիրը^{էս} անէլ, սրվիրը^{էս} ինիլ դարձվածները:

Պատժի այս տեսակներն էլ արտացոլվել են որոշ սպառնալիքներում, որոնցով մարդիկ իրենց զայրույթն են արտահայտել իրրէսըտ մօրըմ քըսլական, ծամըտ կրտրրլականըմ, աշկէրըտ տ **չ**ա կտամ, հափուռըտ ածէմ²⁰ և այլն:

Դեռևս նախնադարյան հասարակություններում տարածված երևույթ էր, որպես հաղթության նշան, կտրել պարտության մատնվածների վերջույթները, գլուխը, քիթը կամ ականջը: Փոքր-ինչ քաղաքակրթվելով ծայրատելու փոխարեն քիթն ու ականջը ծակում և օղակ էին անցկացնում, որով ցույց էր տրվում վերջիններիս հպատակությունն ու պատկանելությունը²¹: Հայկական իրականության մեջ վաղեմի այս սովորությունը պահպանվել է մատաղացու կենդանու ականջը ծակելու կամ կտրելու արարողությամբ և նույն խորհուրդն է կրում, քանի որ մատաղը հենց զոհ է, հպատակ՝ նախատեսված որպես Աստծու պատկանելություն: Սրանց հետքերը կարելի է տեսնել Ղարաբաղի բարբառի **քրէթը հըղլակ քըցիլ** «սանձել, հնազանդեցնել» և **ընգուճէն օղ անէլ** «մեկի պատվերը, խրատը միշտ մտքում պահել» դարձվածներում: Թեև **ընգուճէն օղ անէլ**-ը արդեն վերաիմաստավորվել է, սակայն սա ևս ենթադրում է մեկի հնազանդությունն ու ականա ենթարկվելը:

Հաղթանակի հետ առնչվող ծեսերից էր նաև պարտվածի արյունը խմելը, որ դեռևս տոհմացեղային հասարակություններից եկող սովորություն էր և

¹⁷ Վ. Բոդյան, Հայ ազգագրություն. համառոտ ուրվագիծ, էջ 171:

¹⁸ Լ. Հարությունյան, Նշխարներ Արցախի բանահյուսության, գ. 2, Ստեփանակերտ, 2004, էջ 226:

¹⁹ Նույն տեղում, էջ 233:

²⁰ Ա. Ղազիյան, «Արցախ», ՀԱԲ, Երևան, 1983, էջ 166:

²¹ Ե. Լալայան, «Միսական կարգերը հայոց մեջ», Ազգագրական հանդես, հ. 21, Երևան, 1911, էջ 190:

արյան միջոցով հակառակորդի քաջությանը հաղորդվելու պատկերացումն էր կրում: Ժամանակի ընթացքում ավելացել է վրեժի նշանակությունը²²: **Արփինը խրմէլ դարձվածը, կապվելով այս սովորության հետ, պահպանել է «պատրաստ լինել սպանելու՝ արյուն թափելու»** իմաստը:

Ճանաչողական լեզվաբանության գրույթներից մեկի համաձայն՝ մարդու գիտելիքները վճռական նշանակություն ունեն նրա վարքագիծն ու գործունեությունը որոշելու հարցում, իսկ լեզվաիմացության մեջ պայմանավորված է նրա լեզվական վարքականոնը²³: Դարձվածների ծագման հիմքում կարող է ընկած լինել նաև մարդու կենսափորձը, բնության երևույթներին ու կենդանական աշխարհի առանձնահատկություններին քաջածանոթ լինելը: Հենց կենսափորձի շնորհիվ մարդը գիտի, որ ձեռքով ձուկ բռնելիս այն պետք է գլխից բռնել: Լեզվում **ձուկը գլխից բռնել** բառակապակցությունը վերաիմաստավորվելով ձեռք է բերել դարձվածի արժեք: Ղարաբաղի բարբառում **ծփկունը կըլխան փրոնէլ** դարձվածը այդ վերաիմաստավորման համարժեքն է, որ նշանակում է «գործին հմտությամբ ձեռնամուխ լինել»:

Իսկ Լրփին մորթէն ճիտը քրցիլ/ըղնէլ դարձվածը «համառել, հակառակել» իմաստով ամփոփում է այդ կենդանու ֆիզիկական բնույթից բխող նմանությունը, քանի որ գայլի վիզը անդյուրաթեք է, և մի բան տեսնելու համար պետք է ամբողջ մարմնով շրջվի՝ համառելով ու հակառակվելով այդ բնույթին:

Վէզը տակավը տալ նշանակում է «մի բան հանձն առնելով՝ շանադրաբար աշխատել»՝ ինչպես լծկան եզր:

Մեր նախնիները հատակ պատկերացում ունեին կենդանիների բնավորության, վարքի մասին: Օրինակ՝ շանը որսի տանելուց առաջ նրան սոված էին պահում: Նման պատկերացումները հանգեցրել են մարդկային մտածողության պատկերավոր համադրությանը. **փօրը վէց-վէց անէլ** դարձվածը սկզբնապես ուներ **փօրը վը՛րս-վը՛րս անէլ** ձևը, որ նշանակում է «սոված լինել, որս կանչել»²⁴:

Արտաքին աշխարհի մասին մարդու ունեցած պատկերացումներն արտահայտվում են նաև նրա ձեռք բերած գիտելիքների լեզվական ձևերի իմացության մեջ: Լեզվական և արտալեզվական միջոցների ամբողջությամբ էլ ձևավորվում է աշխարհի լեզվական պատկերը: Մի շարք դարձվածներում պահպանվել է խորհրդանշային գործողությունների ենթատեքստը, որը հենց այդ պատկերի յուրովի ընկալումն է:

Ղարաբաղի բարբառում գործածական է **պօրտը մին տը՛ղ կըտըրվէլ**

²² Վ. Բդոյան, Հայ ազգագրություն, էջ 167:

²³ Լ. Խաչատրյան, Ընդհանուր լեզվաբանության դասընթաց, Երևան, 2017, էջ 291:

²⁴ Լ. Հարությունյան, նշվ, աշխ., էջ 185:

(մանկությունը մի տեղ անցկացնել, տեղանքին լավ ծանոթ լինել) դարձվածը: Հավատում էին, որ պորտը կտրվելուց հետո տունը նրա համար դառնում է սուրբ օջախ: Ըստ հնագույն սովորության՝ նորածին տղա երեխայի պորտը կտրում և ձգում էին տնից դուրս, հեռու մի տեղ՝ հավատալով, որ տղան այդպիսով ակտիվ կյանք կվարի²⁵, մինչդեռ աղջիկ երեխայինը պահում էին տան խոր անկյունում՝ տնային կյանքին նրա նվիրվածությունը կանխորոշելով: Այս դեպքում ժողովուրդը լեզվական ընդհանրացում է կատարել՝ երևույթի բնախոսական նշանակության ընկալումից հասնելով նրա բարոյական նշանակության ընկալմանը: Պորտը **տփսփամբ կրտրած/ք՝ փչան ընգած** կամ **պորտը շօն տարած** դարձվածների «պարապ-սարապ թափառող» իմաստը արդեն փոփոխված երանգով է կապվում այդ սովորությանը:

Կենցաղում մշտապես գործածվող իրերից էին մաղն ու խախալը՝ ալյուրն ու ընդդեղենը մաղելու համար, որոնք իրարից տարբերվում են անցքերի չափերով: Հարստության ու լիության հիմնական չափանիշ էր համարվում հացահատիկը, որի հետ կապված էլ ալյուրի մաղը ևս դիտվում էր որպես առատության ու սրբության խորհրդանշան: Ուստի պատահական չէ, որ կենսական ամենակարևոր գործողություններն արցախցին համեմատեր այդ խորհրդանշանի հետ: Վերաիմաստավորելով լեզուն նմանեցրել է մաղելու գործողությունը «գլխավորը երկրորդականից տարբերելու» իմաստին **ընգուճէն մինը մաղ շինիլ, մինը՝ խախալ դարձվածով**:

Հարաբաղի բարբառում հետաքրքիր ծավալումներ ունեն կազմախոսական որևէ բաղադրիչով և **մի** անորոշ դերանունով կազմված դարձվածները: Այս իմաստային դաշտի միավորները, փոխաբերաբար գործածվելով, ձեռք են բերում չափ ու քանակի իմաստային դաշտին բնորոշ հատկանիշներ: Հայտնի է, որ հասարակության զարգացման վաղ շրջանում որպես չափման միավորներ են ծառայել կենցաղային տարբեր բնույթի իրեր: Սովորական երևույթ է եղել նաև չափվող առարկաների մեծությունը մարմնի մասերի հետ համեմատել: Այսպես՝ «քիչ» կամ «փոքր» իմաստով գործածվում են **մին պէրան, մին պիրընպատառ, մին դամարը, մին ծը՛րք, մին մաննը, մին դէյնը, մին դէյնու մըչանք, մին կրծէյնը, մին կրոքրպրտառէ, մին հափուռ, մին հափրուռ մըչանք** դարձվածները:

Պէրան բառը **մին պէրան** դարձվածում համըմբռնմամբ ցույց է տալիս մեկ մարդուն, ինչպես նաև՝ մեկ անգամ ասելը (մին պէրան ասէլ) կամ շարունակ կրկնելը, **մին ծըէրք** դարձվածում **ծըէրքը՝** նման իրերի ամբողջություն կամ մի բաժին: Համըմբռնումը կարող է վերագրվել նաև մարմնի մասին բնորոշ գործառույթներին, ինչպես՝ **մին փօր-ը** կարող է ցույց տալ մեկ անգամ սնվելը կամ նվազագույն վարձատրություն, **մին վը՛հնանը տը՛ղ-ը՛ը՛** փոքր տարածություն,

²⁵ Ե. Լալայան, *Երկեր*, հ. 2, Երևան, 1988, էջ 367:

մին վրճանը կանօխ-ը՝ սպասվածից շուտ, մին կըլօխ-ը՝ առանց դադարի, շարունակ կատարվելը, մին աշկավ-ը՝ թերահավատությունը, խտրականությունը վերաբերվելը, մին շէլակ-ը՝ զգալի շատ լինելը:

Իր գործունեության ընթացքում մարդն ստեղծել է մշակույթի տարբեր գործիքներ, որոնք նաև հանդիսացել են իրենց իսկ արարման ժամանակի խորհրդանիշներ: Այս առումով, մարդու գործունեությունը կարող է ծնունդ տալ ոչ միայն առարկաների, այլև խորհրդանիշների:

Որպես այդպիսի խորհրդանիշներ՝ կազմախոսական դարձվածներում խտացված ձեսերը, վարքագիծը, ավանդույթներն ու սովորույթները ազգային մշակույթի բաղադրիչ են, իսկ դարձվածները՝ որպես լեզվական իմաստակիր նշաններ, միաժամանակ «մշակույթի լեզվի»²⁶ նշանների դեր են կատարում:

Լեզվական այս միավորները իրենց մեջ կուտակել են հասարակության կենսափորձն ու ավանդույթի ուժով ամրակայված կարծրատիպերը, որոնցով բացատրվում են սովյալ հասարակության մտածողության չափանիշներն ու վարքականոնի դրսևորումները: Ուսումնասիրված դարձվածները յուրօրինակ ծածկագրեր են, որ արտացոլում են Ղարաբաղի բարբառի կենսագրությունը, բացահայտում ազգային հարուստ մշակույթը և ամբողջացնում նրա լեզվական քարտեզը՝ հաստատելով նրա արժեքը համաշխարհային մշակույթի համատեքստում:

ARMINE ARZUMANYAN

A LINGUISTIC AND CULTUROLOGICAL ANALYSIS OF SOME SOMATIC PHRASEOLOGICAL UNITS IN THE KARABAKH DIALECT

Keywords: Language and culture, somatic phraseological units, Karabakh dialect, cognitive linguistics, word meaning.

Somatic phraseological units serve as extensive linguistic and extralinguistic material for the study of the interrelations between language and culture. They reflect the history, customs and traditions of a society, and are not only meaningful linguistic but also cultural signs.

Some phraseological units in the Karabakh dialect have linguistic and cultural peculiarities which reveal noteworthy aspects of the linguistic thought and conceptions of the Arts'akh people. They also reveal the development path of the

²⁶ Լ. Խաչատրյան, նշվ. աշխ., էջ 305:

Karabakh dialect, while the cognitive value of somatic idioms finalizes the linguistic map of the Karabakh dialect. The somatic phraseological units constitute a considerable stratum in the Karabakh dialect and may serve as a good ground for studies in word formation and semantics.

АРМИНЕ АРЗУМАНЯН

**ЛИНГВО-КУЛЬТУРОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ НЕКОТОРЫХ
СОМАТИЧЕСКИХ ФРАЗЕОЛОГИЗМОВ В
КАРАБАХСКОМ ДИАЛЕКТЕ**

Ключевые слова: Язык и культура, соматические фразеологизмы, карабахский диалект, когнитивная лингвистика, семантика слова, языковое мышление, внеязыковые реалии, переосмысление.

Соматические фразеологизмы представляют богатый языковой и внеязыковой материал для исследования взаимоотношений языка и культуры. Они отражают историческую реальность, традиции и обычаи данного общества. Являясь значимыми единицами языка, соматические фразеологизмы играют также роль знаков языка культуры.

Рассматриваемые в статье соматические фразеологизмы отличаются такими лингвокультурологическими особенностями, которые выявляют интересные аспекты языкового мышления и представлений карабахского народа. Кроме того, эти языковые единицы отражают историю карабахского диалекта и обобщают его языковую карту. Составляя значительный пласт в карабахском диалекте, соматические фразеологизмы предоставляют широкие возможности для словообразовательных и семантических исследований.